

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուրիդ ՍՊԸ-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/40-Ք ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	<p>ՀՀ դրոշ` պատվանդանով (1x2մ) ՀՀ դրոշ` պատվանդանով (1x2մ)` եռագույն, վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով, 100% մետաքսե գործվածքից, խտությունը` ոչ պակաս 140 գ/մ2-ից: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի ±2%-ը: Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակված լինի երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո` 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով): Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով` 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Դրոշը պետք է կարված լինի շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարված դրոշը պետք է կցակարված լինի տարբեր թելերով` վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան: Դրոշի 3 եզրերը պետք է եզրավորված լինեն ոսկեփայլ երիզներով /ծոփերով/: Դրոշի ամրացման եղանակը` գրպանի միջոցով ձողին կցելով: Գրպանի լայնությունը պետք է լինի դրոշի երկարության 5%-ից ոչ ավելի և չգերազանցի 10 սմ: Ձողն ու պատվանդանը` ոսկեգույն մետաղից: Պատվանդանը` շրջանաձև, ափսեանման, տրամագիծը` առնվազն 40սմ, ձողի բարձրությունը` առնվազն 2.5 մ, տրամագիծը` առնվազն 3սմ, վերևի հատվածում` ոսկեգույն մետաղից սրածայր գլխակալ: Այլ պայմաններ* Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը` իր միջոցներով և իր հաշվին: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր` չօգտագործված, առանձին փաթեթավորված: Փաթեթավորումը` պոլիէթիլենային պարկերով, յուրաքանչյուր պարկի մեջ մեկ հատ պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող</p>

կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: փաթեթավորման միավորի վրա պետք է փակցված լինի պիտակ, որը պետք է պարունակի արտադրատեսակի անվանումը և դրա չափերը: *** Հրավերով մասնակցից պահանջել առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը: **** Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր: ***** Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի: ***** Դրոշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ՀՍ 50-2012 ստանդարտի պահանջներին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/40-Ք ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	